

Օստապ Բենդերի շախմատ խաղալը 2

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Սկսվել են «12 աթոռ» ֆիլմի նոր նկարահանումները: Համաձայն նոր սցենարի, **Օստապ Բենդերը** շախմատ միաժամանակյա սեանսի ժամանակ մի տախտակից աննկատ վերցնում է հակառակորդի սպիտակ թագուհին և փորձում է այն տեղադրել մեկ այլ տախտակի վրա: Բայց որպեսզի հակառակորդը չնկատի, նա որոշում է թագուհին տեղադրել այնպիսի ազատ վանդակում, որպեսզի այն հակառակորդի որևէ խաղաքարի չհարվածի: Ինչպե՞ս դա արագ անել: Օստապ Բենդերը դժվար կացության մեջ է: Շուտով կպարզվի, որ նա այնքան էլ լավ չի շախմատ խաղում: Ձեր ծրագիրը պետք է հաշվի այն վանդակների քանակը, որտեղ Օստապ Բենդերը կարող է դնել սպիտակ թագուհին:

Մուտքային տվյալներ

Մուտքում տրված է շախմատի դիրքը՝ սիմվոլների 8 տող, յուրաքանչյուրում 8 սիմվոլ: Սև խաղաքարերը նշված են b տառով, սպիտակ խաղաքարերը՝ w տառով: Ազատ վանդակները նշված են կետերով:

Ելքային տվյալներ

Հարկավոր է արտածել մեկ թիվ՝ այն վանդակների քանակը, որտեղ սպիտակ թագուհին տեղադրելու դեպքում այն որևէ սև խաղաքարի չի հարվածի:

Օրինակ

Մուտք	Ելք
...b.... ..bb.b..b.... ...w....ww..... ...w...	13
bbbbbbbb bbbbbbbb wwwwwww wwwwwww	0